

Ս.Թ.Վարժարանի Աւարտական Հանդես

3 Յունիս 2006
Երուսաղէմ

Նախագահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր, երեկոյեան ժամը 8ին Ալէք Մանուկեան սրահի բեմին վրայ ընթացք առաւ Ս. Թ. Վարժարանի 2006 տարւոյ շրջանաւարտներու հանդէսը:

Աւելի քան 150 հանդիսատեսներու առաջ, Ս.Թ.Վարժարանի երկրորդական բաժնի աշակերտ-աշակերտուհիները «Մեր Հայրենիք»ի երգեցողութեամբ աւետեցին հանդիսութեան բացումը, որը ամբողջացուց Արմէն Ալեմեանը: Արմէնի խօսքէ ետք երգչախումբը խմբերգեց «Մեր Մանկութիւն»ը, որուն յաջորդեց շրջանաւարտի Մարալ Շէմմէսեանը, որը սահուն Արաբերէնով ներկայացուց աշակերտաց երախտագիտական խօսքը ուղղուած վարժարանի տեսչութեան թէ ուսուցչական կազմին:

Երբայերէնով թէ Անգլերէնով նոյնպիսի խօսքերով հանդես եկան շրջանաւարտ Ջոհրապ Գրիգորեան թէ Խորէն Սարիբէկեան:

Հանդիսութեան գեղարուեստական բաժնի երգչախումբի կողքին յաւելեալ փայլք բերաւ շրջանաւարտուհի Քրիսթին Նաճարեանը դաշնամուրային երաժշտութեամբ:

Ոչ պակաս դեր ունեցան նոյն գծով Թարգմանչացի մշակութային պատասխանատու Տօրթ. Անուշ Նազգաշեան եւ թեռ եւս պարմանուհի Արփի Նազգաշեան երգչախումբին ընկերակցեալ դաշնամուրի նուագով:

Արդարեւ, հանդէսի գրեթէ աւարտի պահուն բեմ բարձրացան Սրբ. Պատրիարք Հայրը, Ս.Թ.Վ.ի տեսուչ Թեոդորոս վրդ. Չագարեան եւ տնօրէն Եղիա Տիգրանեանը ու կատարեցին մրցանակաբաշխութիւնը ուր աչքի ինկաւ միութեանս արեւոյշ քոյր Քրիսթին Նաճարեանը իր գրեթէ բոլոր ճիւղերու մէջ արդարօրէն խլած մրցանակներու շարքով:

Ամենապատիւ Պատրիարք Հօր փակման խօսքէ թէ օրհնութենէ ետք ներկաներու միջեւ ծայր առաւ հրաժեշտի թէ շնորհաւորման մաղթերգանքները:

Այս առթիւ վարչութիւնս կը փոխանցէ իր սրտաբուխ շնորհաւորման մաղթանքները բոլոր շրջանաւարտներուն եւ յատկապէս Քրիսթին Նաճարեանին, Մարալ Շէմմէսեանին, Արմէն Ալեմեանին, Ջոհրապ Գրիգորեանին եւ Խորէն Սարիբէկեանին, որոնք միութեանս հարազատ յարկի տակ կը գործեն որպէս արհմեր թէ մարզիկներ:



Ս.Թ.Վարժարանի ձօժ- տարւոյ շրջանաւարտները, ծախէն աջ: Արմէն Ալեմեան, Խորէն Սարիբէկեան, Մարալ Շէմմէսեան, Քրիսթին Նաճարեան, Ջոհրապ Գրիգորեան եւ Աւօ Գորուշեան: